



ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴՐՈՅՆ ԱԽՈՅԵԱՆՆԵՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕՐԻՈՐԳ ԷՄԻԼԻ ՌՈՊԻՆՍԸՆ

Տեւտոնեան ամբարտաւան կամքով բոր- բորած աշխարհաւեր այս պատերազմի ըն- թացքին՝ Հայէն աւելի ո՛ր ազգը մահացու կերպով տուժեց, ո՛ր ժողովուրդը Գողգո- թայի ճանապարհին վրայ աւելի անգեօ- թէն զոհուեցաւ....:

Իւ սակայն այդ մեր ցաւերը սփոփելու համար զանուեցան տաղանդաւոր մտաւո- ռականներ՝ որ դրական աջակցութիւններով ջանադրեցին ամրելլ մեր ծովածաւալ դառնու- թիւնները. փխնամն օտար հայասէրներ՝ հուժկու բողբոջի ցոյցերով ուզեցին մարդ- կութիւնը զարթեցնել, մեր ազգին իրա- լունքը եւ Արդարութիւնը պաշտպանելու համար:

Հայ մամուլը, գովելի եռանդեամբ, այդ մեր բարեկամներուն հայնապատ արարք- ները պանծացուց, եւ Ազգային Պատուի- րակութիւնը առիթը չի փախուց ամէնուն ուղղելու շնորհակալեաց եւ երախտագի- տութեան իրծեր, լինչպէս նաեւ Հայ դատին

ծաւալման նպաստող հրատարակութիւննե- ռու նուէրներ: Բայց տակաւին կայ մէկը որ Հայաստանէն շատ հեռու, աշխարհիս մեծագոյն Ոստանլին մէջ, հոգեւին փարած է մեր դատին, ու անխնայ ճիգերով 1918էն ի վեր Անլըսաքսոն ազգերուն կը ջանայ ծանօթացնել Հայուն տառապանքը եւ մար- տիրոսութիւնը. մինչ միւս կողմանէ բիւ- ռաւոր հայ փախստականներու, տարագիր- ներու, որդերու եւ այրիներու կեանքը կը փրկէ գեթութեան գործերով:

Այս ազնուասիրտ եւ հայասէր անձն է Օրիորդ Էմիլ Ճօն Ռոպինսըն:

Մեր սիրելի բարեկամներու՝ Պր. Ս. Տէր Գրիգորեանի եւ Պր. Արշակ Աֆրաս- տեանի տուած տեղեկութիւններէ եւ այլ աղբիւրներէ օգտուելով պիտի ջանանք բազ- մաթիւն օրիորդին համառօտ կենսագրու- թիւնը տալ Բազմալէպի ընծերցողաց, յար- գանաց եւ շնորհակալեաց պարտականու- թիւնը կատարելու հնգնաթուխ զգացումով:

ԾՆՈՂՔԸ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ.

Էմիլի Բոպինսկին միակ դուստրն է բարեյիշատակ Sir John Robinson հրապարակագրին, որ «Daily News» Լոնտոնի ազատական օրաթերթին խմբագրականն եղած է 25 տարիներու չափ: Համբաւուր եղաւ՝ Համբիտի եղեռնագործութեանց դէմ ուժգին պայքարելով 1894էն 1896, և պահանջելով Անգլիական կառավարութեան որ դադարեցնել տայ հայկական ջարդերը և զորեղորէն ստիպէ հայկական նահանգներու բարեփոխումները:

Հօրն ալ բազուկ կը հանդիսանայ Օր. Էմիլիի երբ Գիտութեանց և Գրականութեան մէջ մարզուելով մուտք կը գտնէ Lyceum Club, Peccant Arte Guild, Sellorne Society, the Anglo-Russian Literary Society և այլ կանառներու մէջ: Պէրճաբան գրչովը կը մասնակցի թերթին խմբագրական կազմին և շատ մը պարբերական հանդէսներու մէջ մշակուած գրութիւններ ի լոյս կ'ընծայէ: Յետ Busheyի Լոնտոնի Գեղարուեստական կէդրոններու մէջ մարզուելու, Ֆրանսերէն Գերմաներէն և ուրիշ լեզուներ ուսանելու՝ կը ճանապարհորդէ Գաղղիոյ, Իտալիոյ, Չուիչիոյ, Շուէտի և մահաւանդ Գերմանիոյ գեղարուեստական վայրերը ու կ'արտադրէ գրական երկեր և թարգմանութիւններ:

ՀԱՏԱՍԷՐԸ.

Օր. Էմիլիի, Լոնտոնի մեր ազգին ընտիր անձնաւորութեանց ծանօթանալով և հայուն ձիրքերը լաւ ըմբռնելով, աղօրք կը դառնէ մեր ձեռնուած և գաղափարականը դէպ ի ազգային ազատութիւն, ու կը զմայլի մեր ցեղային կրօնական ու մտաւորական օրինակելի առաքելութեանց վրայ՝ անաղարտ մնացած վեց դարերու գերութեան շրջանին: Ուստի յօժարեալ ու սուսմասիրելով հայուն փառաւոր անցեալը, կը հմտանայ մեր Գրական և Գեղարուեստական վաղեմի և ժամանակակից արտադրութիւններուն և կը վճռէ «Եստայիկ Հայուն» ծառայած ըլլալու համար Գաղափարկութեան»:

1913ին, Օր. Էմիլիի նոր եռանդով կը սկսի հայկական դատը պաշտպանել: Կորովի՝ միանգամայն համոզիչ գրչովը, անգլիական «Spectator», «Khaki» և ուրիշ նշանաւոր պարբերականներու մէջ հայոց մասին նամակներու և

պատկերազարդ յօդուածներու շարքեր ի լոյս կ'ընծայէ: «The Truth about Armenia» գրքով՝ իր ընթերցողներուն փաստերով կ'ապացուցանէ թուրքին՝ Հայերը Հայաստանէն ջնջելու ամբարիշտ քաղաքականութիւնը, հետևաբար զօրեղ կոչելով Անգլիոյ ժողովուրդը և Պետութիւնը կը գրգռէ՝ յարգել տալ Կիպրոսի պայմանները ու փրկել հայուն կեանքը և պատիւը:

1913ին, Օր. Էմիլիի շարունակելով հանդերձ իր հայանպաստ գրական գործունէութիւնը՝ Մայիսին կը հիմնէ «The Armenian Society» Ընկերութիւնը՝ համակիր անդիպացի և ամերիկացիներէ բաղկացեալ:

Ընկերութեան նպատակն էր դուրի, ուսումնասիրելով ծանօթացնել Անկլոսարսոն ժողովրդեան՝ հայոց պատմութիւնը, գրականութիւնը, գեղարուեստները, յառաջագիւժական ընդունակութիւնը և դուրս ցայտեցնել Եւրոպական Պետութեանց անիրաւութիւնը՝ Պետիկի 616րորդ յօդուածին չի բաճարծման:

Անտաքախոյս մեծ օժանդակութիւն մատուցայ ընկերութիւնը Հայ Պատուիրակութեան՝ որ վերջապէս Լոնտոնի դեսպանատնով յաշտոց Հայաստանի վեց նահանգներու բարեկարգութեան գործը: Գուցէ ամենէն աւելի ազնուասիրտն Օր. Բոպինսկին հրճուած ըլլայ՝ Հօֆ և Վեստենկ բարեկարգիչներուն Հայաստան ժամանելը լսելով. բայց հրճուանքը կարճատեւ եղաւ, երբ լսեց առաջին անգամեղներ Եւրոպական մարտին և մեր թշուառ դիրքին: Նա իսկոյն մեր



Օրիորդ Էմիլի Բոպինսկի.

եղիբարաղ վիճակ կ'ըմբռնէ, կարծես կը նախագուշակէ մեր ցեղային տանջանքը, մահ, կանց և կուտանաց բռնաբարութիւնը, Հայաստանի քանդու ու հրկիզումը, որով կ'անապաւրէ 1914ի Գեղեմեմբերին հիմնել «Հայկական Կարմիր խաչի և փախտականաց նպաստիչ Ընկերութիւնը» Armenian Red Cross and Refugee Fund, որուն կը ժամանակցին Բրիտանիոյ ամենէն աւելի բարձր գասակարգի տիկնիկներ և այլեր, ինչպէս են Լորա Վալդեր Ժովակալ, դերկոմս Պրայս և իւր տիկինը՝ որ նախագահութիւնը և տանանէ, Ռէլեան Եպիսկոպոսը, Լէտի Թովմաս, Սթր Թովմ. Պարլով, Բոֆ. Ռէնտէլ Հարրիս, Վերապ. Սթ. Է. Կլաւտսոն և ուրիշ: Այն աւելի անգլիացիներ և Լոնտոնացի նաև հայեր: Սոյն պատկանելի ընկերութեան ու

գին եղող Էմիրի՝ պատուական քարտուղարի համեստ տնտեսական տակ, հայոց աղետահաններուն համար անդրդհատ դրամ, դեղորձ և աճէն տեւակ իրեղէն հաւաքելով, կովկասի փախստական կանանց ընկերութիւններուն, պատերազմող կաւաւորներուն, անտէրի ծերերուն, անոց որբիկներուն, և Միջագետքի անապատներու սովալլուկ վերապրողներուն օգնութեան կը փութացնէ. ցարդ շուրջ 120.000 անգլիական սոկի դրամէ է իրագոյն կ'արդարեան տնտեսաբար «Ararat» լոնտոնի Հայոց Միութեան ամսաթերթին մէջ՝ Էմիրի հրատարակած հաշուեցոյցներէ:

ՀԱՅԱՍՏԱՆԵՐԻ ՀԱՐԱՐԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1915ին բովանդակ եփարտու ո Տիգրիսը հայ արևելուկ ներկուած և Միջագետեան անապատներն փոխադրուած մեր ազգայնոց դիակներով ի տեսնելով, Օր. Ռուպարի սիրըը նոր զայրոյթ մը կը զգայ, ուստի հուճկու կոչեր կ'ուղղէ նորէն Անգլիոյ ժողովուրդին «Down in the Near East» վերնագրի տակ «Khaki» տարածուած ամսաթերթին մէջ կը հրատարակէ 16 էջերով պատկերազարդ յօդուած մը, յորում կը պարզէ մեր երկրին տեղագրութիւնը, մեր վաղնիկ պատմութեան դրուագները, հայութեան նախնիք Անգլիոյ ստանձնած պարտականութիւնները, Ջէյմսոնի դիցազնական մարտերը, ներկայ պատերազմի շրջանին հայոց քաջարի դիմադրութիւնները՝ թրքական բանակներուն դէպ ի կովկաս արշաւանաց դէմ, հայ կամաւորներու և զօրավար Անդրանիկի սիրագործութիւնները և քրիստոնէյ հայ ժողովուրդին մահմանական վրեժակներէ եղեռնական շարդերը թուելէ վերջը, Դաշնակցաց անխուսելի յաղթութիւնը և պահանջէ Հայաստանի վերականգնումը և ազատութիւնը:

Կը հրապարակէ տեղէ «Հայկական կարմիր խաչի և փախստականաց Նպաստից Ընկերութեան» կողմանէ տեղեկագրեր և շրջաբերականներ ու բովանդակ Անգլիոյ ժողովուրդը կը յորդորէ մեծագումար նպաստներով փրկանաւորել սովալլուկ և անպատասխար հայերը:

1916ին, երկրորդ անգամ «Khaki» ամսաթերթին փետրուարի թիւին մէջ «Ճշմարտութիւնը Հայաստանի շուրջ» վերնագրի տակ ուրիշ ընդարձակ յօդուած մը կը հրատարակէ՝ 10 զողոր պատմութիւններով զարգարուած: Սոյն գրութիւնը՝ համառօտ բայց կու նկարագրութիւնէ մեր ցեղին առաքինութեանց, ցաւալի ողբերգութեան, հերոսական մարտերուն և դիցազնական մի քանի հրաշալի դրուագներուն:

ԲԱՆԱԽՈՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Օր. Էմիրի մեր տառապանքին առջև մոռցած է իր անձնիւրութիւնը, իր հանգիստը և ինքզինքը Գորիսեան մեծ գործին նուիրած է: Նա իր պաշտպանած արքա դատին համար չի բաւականաբար գրել և գործել, անհրաժեշտ կը համարի խօսիլ և քարոզել իսկ. գիտէ թէ երբեք խօսքը կը լրացնէ գրութեան պակասը, թէ համարէ խօսքը մեծամեծ աղբիւններ կրնայ յա-

ռաջ բերել. որով ահա ի Լոնտոն, ի Մանչեսթը և ուրիշ տեղեր խօսելով հայոց մասին առ հասարակ շնչելով մեր դարաւոր չարչարանին ու Գողգոթանի՝ կը յուզէ ունկնդիրները: Այլպէսով է որ կրցաւ հայասեր օրորողը շատ մը կարեւոր անձինք մեր պատին շահիլ...

Այնիկ ու ծաւալելու համար մեր համբաւը, իր անձնական գրամով բանախօսութիւններ տպագրել կու տայ և կը ցրուէ Անգլիոստ ազգաց մէջ: Իր գեղեցիկ բանաստեղծութիւններէ մին «Armenia and the Armenians» մեզի նուիրած ժամանակ՝ այս սրտագեղ խօսքերը կը դրոշմէր գրքին ճակատը. «Avec mes compliments sincères et mes prières et meilleurs souhaits pour l'avenir de l'Arménie martyrisée».

Կը թարգմանենք ինչ ինչ պարբերութիւններ, հեղինակին ոճին, ընտիր գրչին և ընդարձակ գիտութեան մասին մեռյ մը տալու համար:

«Վերջին քառասուն տարիներու միջոց» Հայաստանի անունը քաղաքակիրթ աշխարհի մէջ նամանիկ եղած է «Հայաստանի» և «Թրուանորեան»: Այնպիսի մը այս երկրիս աշխարհագրական դիտարկ ձևակերպութեանց վրայ՝ բաւական պիտի բլլայ ընթերցելու համար այն պարագաները որոնց օսմաննէնք իր պատմութեան ընթացքը՝ վերջին երկու հազար տարիներու միջոցին...

Հայաստան արեւելեան կողմէն անպատասխար բլլալով և ինչ իսկ գտնուելով մարդկային մեծ պատմականութեանց պողոտանի վրայ, մշու եղած է պատերազմի թատերադէպ մը և փոխ առ փոխ իր հարեան զինուորական ազգերուն աւարառութեան շուռակ եղած: Հայաստանի պատմութիւնը երկար արձանագրութիւն մ'է սրածութեանց, կրակի, սաւեռմի և քաղաքի: Սա կայն այնքան զարմանալի և հայ ցեղիկ կորովն ու անկուսկիւնի որ Ասիական արշաւոր հրոսակներու տարածելու քաղաքականութիւնէ վերջ, որոնք տասնաորդէ ցին հայ ժողովուրդը, շատ տարիներ շանցած, առնեն և քաղաքներ իրենց մոլորիներէն վերստին կանգնեցան և ծաղկեցան առաջուան պէս: Քրիստոսի 34 թուական. Նէն ի վեր քրիստոնէութիւնը մուտ գտած է Հայաստանի մէջ. իսկ 801ին, երբ ժողովուրդը միասնաւոր քրիստոնէայ դարձաւ, իր աշխի ու եռանդուն զաւակներէն ուժեղ մտան դարձի Ազգերու մէջ և Աւետարանը քարոզելու Աղուանից, Պարթևից, Ասորացի և Պարսից, Հայաստան քրիստոնէութեան առաջին պատուարն է Արեւելքի մէջ:

Օր. Ռուպարի Հայաստանի քաղաքական պատմութիւնը մեծ հմտութեամբ և յստակ ուժով պարզելէ վերջ, կ'ապացուցանէ թէ կանոնիկն սկսած է նոյն քաղաքակրթութիւնը, մասնաւորապէս ի վեր նանկով անոր Գրականութիւնը ու Գեղարվեստը. «Հայաստան ունի ընդարձակ գրականութիւն մը, Միջին դարու մէջ՝ եղեւ ղեցական, իսկ արդէ ժամանակներու մէջ՝ զարմանալիորէն իսկանիւղ և օժտուած ինքնաշարժիկ հրապարակ: Ս. Գրքը թարգմանութիւնը կուրած է Դիւիշ թարգմանութեանց, և այնքան հասարակած է ընդգրկել, որ բանասերներու կարծեան անհամար, և թէ անոր երբայական և յունական ընդգրկները կորուսած ըլլային, հայերէն Ս. Գրքը պիտի ծառայէր իբրև ըսա-

գիր՝ ամեն իդեոներով նոր թարգմանութիւնաց համար»։

Ճարտարակառուութեան վրայ խոսելով, Որ. Ռապինսըն, կ'ըսէ թէ, Կ. Պապիկ Ս. Սոփիա եկեղեցւոյն գմբէթը 989թ. երկրաշարժէն վերջ կրկին յիշուած է Տէրաւ անուն հայ երաժարագիտի մի ձեռքով, որ հնչաւոր եղած է Սեփի Մայր-Եկեղեցւոյն և այլ շէնքերու շինութեամբ, ինչմանքի ան, Ս. Նորիկոմիայ եկեղեցին որ Գ. դարու մէջ կառուցուած է 613թ. զինականացնուած է, ապապոյց մ'է որ Ռոմանական հարաբարակառուութիւնը կանոնաւոր զգուշութիւն ունեցած է Հայաստանի մէջ, քանի որ այդ ոճը Եւրոպայի մէջ Նորիկոմիայ Տաճարին վերականգնումի թուականէն վերջ երևան էր զայլ։

Յետոյ, Որ. Ռապինսըն, կը խօսի հայկական մեծ զաղթականութեանց վրայ՝ դարերու ընթացքին մէջ, զիւր ի հաստատան, Իրանսիականի, Գարակաստան, և ասորի բովանդակ Սևիդի կանազան կողմերը, Հնդկաստան, Ճապոն, և այլն։

Առանձին կերպով կը խօսի Վենետիկ զաղթականութեան վրայ, և կ'ըսէ թէ Վենետիկ անոնք մեծ պատուով կը յիշեն բոլոր հայերն, Անձին Միտիմարայ հաստատութեան պատահաւ, և մինչ անիտան համա կրութեամբ ու զովատով կը խօսի Միտանութեան վրայ, կը յիշէ Լորտ Պալարին բնակութիւնը ի Ս. Ղազար և մէջ կը բերէ անոր հետեւի դրուստապոյց խօսքերը. «Հայերէնը հոն թղու մ'է. ըստ անկանքի կը փոխաբնէ աշխատութիւնը անոնք որ կ'ուզեն ուսանել զայն»։

Ափարկիւով Միտիմարեանը երկդարեան Գրական գործունէութեան ազգայնէ վաստակները, ի միջի այլոց կ'ըսէ. «Կը հրատարակուի հոն ամսօրնայ թերթ մը 1843թ. հիմնուած, որ ամենամօրը հաշակով պատկերաբարբոցած է... և Ս. Ղազարու ընդհանուր ապագրութեան վրայ վար չեն մար փարթիկ անհնազանդեցիկ ազգաբնութիւններէն»։ Բանասիրող հիացումով կը յիշատակէ նաև Բագմալեպի ներկայ տարուան պատկերները, կ'ըսէ. «Արքիթի թիւր կը պարտուի պատկերաբարբոցագրուած մը նոյն իսկ մեր թանգերուն վրայ»։

Օր. Էմիլի Ռապինսըն, իր այս բանասիրութեան մէջ եղբարեական խորագրին տեսութեամբ զիտէ վերստին և բնորոշիչ հայոց զվարտը յատկութիւնները. ամեն միջոցներ վեր կը դառն մեր անմահ հայրենասիրութեանը, յետոյ իրեն հիացում կը պատահուէ մեր առանձին նուիրական կանանց, ապա կը գովէ հայկերու բառատնութիւնը որով կրնանք մենք երազալով խոյանցով տառապել անկի վեր քան մեր մեծապէս աղէաբը. «Շնորհիւ այս յատկութեաններուն և իրենց Եկեղեցւոյն, կ'ըսէ բանասիրող, հայերը քայտար անկորուստ պատճ են իրենց ազգութիւնը, և թէպէտ՝ իբրեւ մոլոդուր» քրուած են անոնք աշխարհիս ամէն կողմ, վասնէ ևն որ՝ իբր քաղցրաբնիկ տարր՝ ընդ փոյն զաղթի պիտի բույս իրենց կարեւորութիւնն Արեւելքի մէջ»։

Հուսկ, Որ. Միտիլ, յիշելով հայ տաղանդաւոր անձերը ներկայապէս ամենուրեք մատուցած ծառայութիւնը՝ վարչական, գիտական, գիտական, և այլ

ամէն հիւրերու մէջ, հետեւի զեղեցիկ բացատրութիւնով կը վերջացնէ իր բանասիրութիւնը։

«Հիմեօս հուսկ մերթախից Արեւմտեան Սիարա. եւ, թուրքա թիկունք դարձուց իր պաշտպաններուն, Հայերն, ինչպէս միշտ, ամենէն աւելի տուժեցին։ Բերեաւիս և Յիսապա իրենց մարդկային ընդդիմադիր ծաղիկները գունգին՝ զարմանալու համար իրենց անցեալի մեծ սխալները, Եւրոպա խաղաղութեան կը ցանկայ. բայց նա հրքէք պիտի չգտնէ տեսական խաղաղութիւն, մինչև հայկական փշալից նարցը լծապարի խոբապէս՝ այլևս գուրս չեղելու պայմանով։ Ու երբ հայերն սկսին ազատ ու անգործ ապրիլ իրենց Բնաշխարհին մէջ, պաշտպանութեան մը ներքէ որ պարտի երաշխաւորը ոչ թէ Բարիկը, Լոնտոնի, Վիեննայի կամ Պիտիլի գաշինքով մը, այլ քաղաքակրթեալ Եւրոպայի և Միացեալ-Համահայտեալ կարծեաց համահայնութեանը, այսինքն չհասնէ իրանքիս Դաշինքով, այն ատեն հայերը պիտի չենան Նոր Հայաստանը, որ պիտի ըլլայ կերպի քաղաքակրթութեան և զարգացման՝ Միեմար Սրեւիթի մէջ»։

Այսպէս ուրեմն խաղաղապի սիրով կը բաբախէ սիրուն Անգլիացի մեծասիրտ անիմոլ մը՝ հայերու նկատմամբ։ Թորջ օրինակ և խրախոյս ըլլայ նա անհուն, որ մեզմէ շատերէն աւելի գիտէ մեր պատմութիւնը, գրականութիւնը և տոհմային ճիշդները, ու կը բազմի, կը ճգնի ազատ Հայաստան մը վերականգնել, որ ըլլայ փարոս մը մտային յուսատրութեան և քաղաքակրթութեան՝ Արարատէն հառապայթող Արեւելքի անարամաց ազգերու գոյութեան մէջ։

ՄԱՅՐ ՈՐԲՈՑ.

Մենապէս կը հիանանք՝ յիշելով այս անիմոլ Գործիչին սիրոյ հարմարներն՝ թշուառ հայութեան սփոքրանաց համար։ Տարբեր մը առաջ էր երբ ստացանք իր մեզ ուղարկ նամակը՝ ծանուցանող Լոնտոնի Հայ կարմիր խաչի Գործը և Ալեքսանդրոպոլի որդանոցին կացութիւնը։ Փութեցինք բազմաթիւ գրգռելու անմիջական առաջումով՝ փորձիկ օգնութիւն մ'ընելն։ Հուստով պատասխանեց թէ մեր ծրարներու բովանդակութիւնը բարեւեր հայերու վաճառելով՝ փոխարէնը որբերուն յատկացուցան էր և կ'ըսէր. «Ի սրտէ մեզի շնորհակալ եմ որ մեր որբերուն բարեացակամ գտնուեցաք և արդէն ձեր բաժնիք մատուցած եղաք»։ Մեծ բարեբարուհւոյն այս ազնուական ոճը զմեզ պարտապէս բազմապատկել մեր առաջումները, զի փոխառնակուած նամակներէն նշմարեցինք որ նա մաշդաբար կը սփոքի մեր թշուառ որբիկներուն վշտացած սրտերն ու կը սրբէ անոնց արտասուայորդ աչքերը...։ Նա մեզ պիտի ներէ անտարակոյս եթէ համարձակինք մէջ բերել իւր հետեւալ նամակը՝ գրուած զեկտեմբեր 17ին։

«Հիմա լայն հրահայն Անգլիոյ մէջ անցընելու վերջ, հոս (Լոնտոն) կը վերադառնամ, և ըստ զգաւածու եմ գտնելով Գեղարմիկ և Գեղարուստի բազմաթիւ օրինակներ, զորս ինչ գրկելու բարեարտութիւնն ունեցած է, կը խորհրդմ որ հաւրք իմ անկեղծ շնոր-

հախալիքս ընդունիլ զգեցելի զբերուն, և մասնաւորապէս պէս ձեր մոռանութեան համար զոր ունէիք մեր Որբանոցին նկատմամբ՝ երբ այդպիսի մոռանութեան մէջ կը գտնուէիք¹։

Կենք ստեպ Ս. Ղազարի մասին կը խօսինք, մեր ազգեցիկն ու մեր յայտը ձեզ նետ և ձեր զգեցելի վէ և նետիկ քաղաքին մասին են ամէն օր։ Սրտանց կը յուսամ որ ամէն ինչ լաւ երթայ։

Ձեր ինձ զրկած զրկելի բոլոր միւս զգեցելի ծախուած են. անհոգիէ շատերը Հնդկաստանը գրկուեցան։

Հայ Երեսօտաւորաց կողմէն Մանէսէզերի մէջ սարքուած Միութիւնը 3 Դպիսիներին՝ մեծ յաջողութիւն աւուեցան։ Ինձ մեծ ընդունելութիւն մ'ըրին։ «Ararat» մտաւորաբէն մանրամասնութիւնները կրեաք իմանալ։ Շարաթ մը Ստեփանը ահագնիկ հայ սիրելի բարեկամներու և բարեկամութեանց հետ, և ապա ուրիշ այցելութիւններ կատարելով՝ շնամալով մեր Դատին համար միւս շոր բարեկամներ չափի։

Ինչպէս տխուր է ներալիս՝ աշխարհը, կը փափաքէ ապրիլ՝ տնտեսու համար Հայաստանը վերջնականօրէն Երկրի մը։

Հայ որբիկներու համար այսպիսի մայրաքաղաքով անձնաւորութեան մասին տեսէք ինչ կը գրէր մեզի Պ. Արշակ Սաֆրաստեան։ «Իս ա կանաւտես եղած եմ զանազան ատիկներով սըրտազրաւ միջնադէպերի, երբ այս ազնին Անգլուհին ուրիշ Անգլիացիներին հայ որբերի դրութիւնը նկարագրած պահուն արտասուեց իր ցաւաստիքն, անկողին լինելով անձնապէս հարուստ, նա կապող էր միջնաւորներին պէս մտածել մի միայն իր գրասանքներին մասին»։

Այլ, նա իր զուրկեցութիւնը չի մտածեր, նա աշխարհի մէջ տեսած տառապանքներէն զգուած՝ ապրիլ կ'ուզէ դեռ միայն ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՅՈՒՄԸ մը տեսնելու համար։ Դա յանձն կ'առնու ձեռք կարկաւել և ինդրագին նամակներ գրել հեռաւոր աշխարհներ, որպէս զի հաւաքէ ամսական 2.000 ռուպլի՝ Ալեքսանդրոպոլի մէջ բացուած 40 որբերը ինամել կարենալու համար, և որպէս զի իր թղթակցութիւնները ռուսական սահմաններէն ազատ անցնին, նա սովորի սկսած է նաև ռուսերէն լեզուն։

Օր. Էմիլիի բարերարութիւնը սահմանափակուելով չի գիտեր, նա անվերջ ապէն սեռի և տարիքի հայերուն արտասուած ցրելու զգուծեան գործը պիտի կատարէ։ և յիշաւի վասպուրապէսէ փախստական հայ կանանց ձեռնարուեստի Կոնսթանդնուլի կազմակերպելով Երևանի և Թիֆլիզի մէջ, հայոց բարերարութիւն, անոնց զրամական և նիւթական օգնութիւններ կ'ուղարկէ

և միջոցներ ցոյց կու տայ որ ձեռագործական աշխատութիւններ լաւ տրվելով ինքնօգնութեամբ անկախ ապրելու վայելիչ ունենան։ Այդ հայունհինքի՝ երբևէ զոյգն տրիտուր երախտագրութեան՝ հիւսելով ժանեակ մը՝ կ'ուղարկեն իրեն։ Եւ Էմիլի գորգուրանքով կ'ընդունի ապա իբրև անկին առհասարակայ մահուանէն ազատուած հայունհայ ձեռքերու ճարտարութեան, անով կը զարգարէ իր պարանոցը, ինչպէս կը տեսնուի զիմանակարն վրայ։

ՀԱՏ ԴՐՈՇԻ ԱՆՈՏԵԱՆԸ.

Անգլիոյ Գունիս 13ի «Հայկական դրոշակի օրուան» մեծագոյն ախոյեանը իսկ մեծ է Սր. Ռոպինսըն։ Դա յաշողած էր նոյն եղբ դրամ հաւաքելու գործին մասնակից ընել՝ Բրիտանիոյ Հայաբարապետի կողակից՝ Տիկին Լորտ Ջորճը, Կերկոմունիի Պլայսը, Կերկոմունիի Ինչիւղը, Լէտի Ալեքսանդրը, Կոմունիի Գարնաւաթը, Սր. Դաւութը, Լէտի Թոմասը և ուրիշ հարիւրաւոր Եւրոպայի և հայ շնորհալուք ատիկներ, ներ և օրիորդներ, որոնք Լոնտոնի և Անգլիոյ Չիլի աւելի քաղաքներուն մէջ գտնէ դուռ, պահ, դոկէ պանդոկ, փողոցէ փողոց, վաճառանոցէ վաճառանոց շրջելով և հայկական դրոշակներ կամ Հայաստան խորհրդանշող կոճակներ գտնելով բարեացակամ ժողովուրդի կուրծքին վրայ՝ գանձանակներ լեցուցին հայ տարագիրներու, որբերու, սովեակներու և կամատններուն ի նպաստ։ Դոյն օրը Անգլիական Մամուլը լայն նաւար հայոց խնդրով գտնեցաւ, իսկ հայերու թշնամի Գուրիլմոս կայսեր օգային տորմիդի 16 սուլտանները հայանապապ փառաւոր ցոյցի օրը նոր ոճերով մը խաղաղեցին՝ Լոնտոնի վրայ ռուբրեր տեղադրել և 100է աւելի մեռել, 350է աւելի փորաւորաններ գտնի կործանելով։

Ձի մոռնալ յիշելու որ Սր. Էմիլի իր իմաստուն գործեակերպովը վաստակած ըլլալով գաւառներու կեդրին աշակցութիւնը՝ զրամահաւաքողի զորութիւնը եկեղեցիներու և կարողներու մէջ էս ներմուծած էր. շատ մը ռուսախոյն սիրայածար շարժարած էին մրցանակներ տաւ, նալէ, պայմանաւ որ փոխարժեքը հայութեան բեկոններուն յատկացուէր։

Ինչպէս չի գմայլի այս վեհասիրտ Տիկնոջ հայասիրութեան վրայ՝ որ օրն ի բուն չարաւտակ ղիմուններ ընելով դրոշակներ և գանձանակ ի ձեռին, թէ և յոգնութենէ կը հրաւրուաւ նա և սակայն կենալին մեծագոյն միջոցաւ փոխարութեան օրը կը համարի Հայկական դրոշակի օրը՝ անձամբ 10.000 անգլիական ոսկիէ աւելի դրամ, հազուատեցին, զեղորէ և ուրիշ իրեղէններ հաւաքած ըլլալուն համար։

ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՐԱՆՏԱՊԱՐՏ.

Դահաւասկ Հայաստանի բոլորանուէր այսպիսի փսնաւալք բարեկամահայ յիշատակը պէտք չէ՝ պանծացնէ հայութիւնը։ Դա շատ սիրելի մեր ազգը, շատ գաւառներով մեր աղետներէն իր բովանդակ մտաւոր, հոգեկան և նիւթական գործութեամբ փարած մեր Դատին, այրական

1. Իրականութիւն մեր աղեկարար ելքը վէնեալէն, Դոյնմբեր Տիկնոյ, յորով զբերուն ծրարներ փոխապետած էինք ի Լոնտոն, մինչ մեր Երեսօտնութիւնն ալ փոխապետաւոր ժողովուրդին հետ մեկին ղեկ ի հարաւային իտալիա։ Չքնաղ քաղաքին զրաման փոխալը միջոցն վեհաւոր կը թուէր աշխարհը Աստուծոյն բանակներէն։

դիւցազնութեամբ կը ճգնի երաշխաւորել Հայաստանի փրկութիւնը. և արդէն ընդշնամբելով դաշնակցաց վերջնական յաղթանակը, նա մեզ լիախիբ զգացումով կը մաղթէ փութով տեսնել Հայոց Ազատութեան արփաւէտ օրը:

Եւ մենք ակնկառոյց այդ ցտակալի օրուան՝ երբ տեսնենք փառապանծ ծագիլն արեգական, ազատն Մասիսի բարձունքէն, պիտի գիտնանք օրհնութեանց և իղձերու բուրումնաւէտ խունկէն լով մեծարել մեր ազգիկ գործիչներու առաջնաւ կարգ շարքին մէջ Գթութեան Մարմնացում համեստափայլ Սր. Էմիլի Ռաֆիկսը:

Թող զտառն ըլլայ, անգլիացի հայասէր Օւրիորը, որ երբ Հայաստան պիտի դադրի ա-

ւերակաց կոյտ մ'ըլլալէ, երբ իր այնքան զոռովագին սիրած որբերն և որբուհիները սկսին վերադառնալ դէպի իրենց կործան ու փլատակ տունները, ու երբ մեր հայրենիքին բոլոր մազապարծ ու ճողոպրած ցիրուցան բեկորները խուժեն վերականգնելու և վերականգնանալու մեր Հայաստանը, չի պիտի մոռցուի, ոչ երբեք, կանգնելու երախտագէտ սրտերէ յաւերժական անդրի մը այդ մեծ Հայասէրին և մեծ բարեւարիի ի յիշատակ. ու անմեղ մանուկներու բերանները պիտի օրհնեցան իրենց մարտիրոսացած մայրերուն անուան հետ, Սր. Էմիլի Ռաֆիկսըն իր անմոռաց անունը...

Հ. ՆԵՐՍԷՍ

ԱՄԻՐՏՈՎԼԱԹԻ

ԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

« ԲԱԶՄԱՎԷՊ » ի ներկայ տարուան Մարտ ամսոյ պրակին մէջ (էջ 101-106) հրատարակած, « Հայ բժշկարաններու համաձայն Ախտաբանական Բաճեր » յօդուածիս իբրեւ ամբողջացուցիչ մաս՝ այսօր ալ կը հրատարակեմ Ամերտովլաթի Աւգուտ թշկոյտը անունը կրող ընդարձակ և ընտիր բժշկարանին, — որ իմ անձնական սեպհականութիւնս է, — ախտաբանական գլխակարգութիւնը, ուր իրարու ետեւէ շարուած են նոյն գործին մէջ ուսումնասիրուած հիւանդութիւններն ու դարմանները, շատ անգամ իրենց համազօր արարական («տաճիկէն») և կամ պարսկական անուններով:

Ահա այս գլխակարգութիւնը:

Հոս ալ հատուածներու թիւերն իմ կողմէ դրուած են:

1. Թեփուկ որ ի գլուխն լինի. որ տաճիկն հազազ ասէ. և պարսիկն սապուսայ:

2. Սայֆայ ասէ յարապն ինքն այն է որ գլուխն խոցնա՝ և քանչալ լինա՝

3. Որոյ մազն ի վար զա՝ մարդուն. և կամ ճաղատ լինի մարդն այս է:

4. Որոյ մազն ճղքի մարդուն. և կամ անժամ ճերմկի մազն և մաւրուցն:

5. Տայու սայլապ. և տայուլ հայայ. բ. ա. հիւանդութիւն է ֆիսա է:

6. Գլխացաւութիւն որ ի տաքութենէ լինի. և կամ ի հովութենէ:

7. Գլխացաւութիւն որ ի գիճութենէ լինի և կամ ի չորութենէ լինայ:

8. Գլխայ ցաւութիւն որ ի յարենէ լինի. և կամ ի պալլամէ լինի մարդուն:

9. Գլխացաւութիւն որ ի սաֆրայէ լինի. և կամ ի սալտայէ լինի մարդուն:

10. Գլխացաւութիւն որ ի տաք քամու լինի. կամ ի հով քամու լինի:

11. Գլխացաւութիւն որ ըղիկին ծածկոցն ուռնալուն լինա մարդուն:

12. Գլխացաւութիւն. որ. յ. անուանէ պայգիայ. այս ալ գլխացաւ քն է:

13. Գլխացաւութիւն որ ի զախմէ լինի. և կամ ազգի ազգի լուծմանէ լինի:

14. Գլխացաւութիւն որ ի գինու խուժմաբէ լինի. և կամ հիւանդին պուհրանէն:

15. Գլխացաւութիւն որ ստամոքին թուլութենէն. և ի տաքութենէն. և ի վատութենէն է:

16. Շաղիղա՝ որ է կէս գլխացաւու